



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 1142/02/2009թ.  
Նախագահող դատավոր՝ Կ.Սաղյան  
Դատավորներ՝ Լ.Ավանեսյան  
Ն. Գրիգորյան

Քաղաքացիական գործ թիվ 1142/02/2009թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

«17» հունիսի 2010թ.

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր Ի. Կարապետյանի  
դատավորներ՝ Զ. Օհանյանի  
Կ. Ղարայանի

դռնբաց դատական նիստում քննելով Վիտալի Հայրապետյանի վճռաբեկ բողոքը ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. ապրիլի 22-ի որոշման դեմ՝ ըստ հայցի Ստեյլա Ռաֆայելի Օհանյանի ընդդեմ Վիտալի Վարդանի Հայրապետյանի՝ Ստեփանակերտ քաղաքի Ակ. Իոսիֆյանի անվան փողոցի թիվ 7«ա» առանձնատան նկատմամբ համասեփականատեր ճանաչելու և այնտեղ բնակվելու խոչընդոտները վերացնելու պահանջների մասին,

**Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

**Գործի դատավարական նախապատմությունը**

Հայցվոր Ստեյլա Օհանյանը դիմել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան Ֆայսուլիետ՝ առաջին ատյանի դատարան, խնդրելով իրեն ճանաչել Ստեփանակերտ քաղաքի Ակ. Իոսիֆյանի անվան փողոցի թ. 7<sup>ա</sup> առանձնատան համասեփականատեր և վերացնել այնտեղ բնակվելու հետ կապված խոչընդոտները:

Առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 26-ի վճռով հայցը մերժվել է:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը Ֆայսուլիետ՝ վերաքննիչ դատարան 2010թ. ապրիլի 22-ի որոշմամբ հայցվորի վերաքննիչ բողոքը բավարարել է մասնակիորեն՝ վճիռը բեկանվել և

ճանաչվել է Ստեյլա Օհանյանի՝ Ստեփանակերտ քաղաքի Ակ. Իոսիֆյանի անվան փողոցի թ. 7<sup>ա</sup> բնակելի տան՝ Վիտայի Հայրապետյանին պատկանող մասի նկատմամբ՝ համատեղ սեփականության մասնակցի իրավունքը: Վճիռը առանձնատանը բնակվելու խոչընդոտները վերացնելու պահանջի մասով թողնվել է անփոփոխ:

Նշված որոշման դեմ պատասխանող Վիտայի Հայրապետյանը բերել է վճռաբեկ բողոք:

Վճռաբեկ բողոքին պատասխան է ներկայացրել հայցվորի ներկայացուցիչ Ա. Մադաթյանը:

**Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում և հիմնավորումներով.

1.Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Վիճելի առանձնատունը չի ենթարկվել փոփոխությունների, ուստի բացառվում է հայցվորի կողմից կառույցները կառուցելու հանգամանքը:

Ըստ տան տեխնիկական 1979թ. անձնագրի, հատակագծի չտրիխավորված մասը պատկանում է իրեն՝ Վիտայի Հայրապետյանին: Այդ հատակագիծը գոյություն ուներ դեռևս իր ծնողների օրոք՝ մինչև բնակելի տան մի մասի իրեն նվիրելը: Այն նվիրվել է իրեն նույն տեսքով, առանց որևէ փոփոխության: Վիճելի առանձնատան 2/3-ական մասը և 400 քառ. մետր հողատարածքը պատկանում է իրեն:

Տանը կից և օժանդակ կատարված շինություններն, ըստ փորձագետի եզրակացությանը կից թ. 2 հավելվածի, ինքնակամ շինություններ են: Դրանք գոյություն ունեին մինչև հայցվորի հետ ամուսնանալը: Դատարանը, սակայն, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել տան հատակագիծը, փորձագետի եզրակացությանը կից թ. 2 հավելվածը և չի համադրել գործում առկա մնացած ապացույցների հետ, ինչի արդյունքում հանգել է սխալ եզրահանգման ու հայցը բավարարել մասնակի:

2.Դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Նշված պնդումը բողոք բերած անձը պատճառաբանում է նրանով, որ առանց որևէ իրավական հիմքի, Ակ. Իոսիֆյանի անվան փողոցի թ. 7<sup>ա</sup> բնակելի տան իրեն պատկանող մասերի նկատմամբ դատարանը ճանաչել է հայցվորի՝ որպես համատեղ սեփականության մասնակցի իրավունքը:

Փորձագետի եզրակացությունը հիմնված է հայցվորի կողմից ներկայացված կեղծ տվյալների և ցուցմունքների վրա:

3.Վերաքննիչ դատարանն անհիմն է հղում կատարել ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 4-րդ մասի և նախկին ընտանեկան օրենսգրքի 22-րդ հոդվածի պահանջներին և չի կիրառել այն օրենքը  $\forall$ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ մասը, որը պետք է կիրառեր:

Նշված պնդումը բողոք բերած անձը պատճառաբանում է նրանով, որ համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ մասի, մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստանալու գույքը նրա սեփականությունն է: Հայցվորն իրավունք չունի նվեր ստացած գույքի նկատմամբ ներկայացնելու համասեփականատեր ճանաչելու պահանջ:

Բողոք բերած անձը գտնում է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը էական նշանակություն կարող է ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը խնդրում է բեկանել վերաքննիչ դատարանի 22.04.2010թ. որոշումը և օրինական ուժ տալ առաջին աստիճանի դատարանի 26.02.2010թ. վճռին:

**Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Վճռաբեկ բողոքի պատասխանում հայցվորի ներկայացուցիչ Ա. Մադաթյանը գտնում է, որ վճռաբեկ բողոքն անհիմն է ու ենթակա է մերժման: Անհիմն է բողոք բերող անձի այն պնդումը, թե առանձնատունը փոփոխությունների չի ենթարկվել: Ըստ տեխանձնագրերի տվյալների, 1-ին և 2-րդ հարկերում տարածքները ավելացել են: Փորձագիտական եզրակացությամբ առաջին հարկի մակարդակով ավելացած կցակառույցների մակերեսը կազմում է 67,26մ<sup>2</sup>, որից 33,28 մ<sup>2</sup> մակերեսը առաջին հարկում և 32,470 մ<sup>2</sup> տարածքի նկատմամբ գրանցված է Հայրապետյանի սեփականության իրավունքը, ինչը հաստատվել է նաև դատաքննության ժամանակ փորձագետի տված ցուցմունքներով:

**Վճռաբեկ բողոքի համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վիտալի Հայրապետյանի և Ստելլա Օհանյանի ամուսնությունը գրանցվել է ԼՂՀ ԱՆ. ՔԿԱԳ բաժնում : Համատեղ ամուսնությունից ունեցել են 3 երեխա:
2. Սերժիկ Հայրապետյանը 1979թ. սեպտեմբերի 21-ին նվիրատվության պայմանագրով, Ստեփանակերտ քաղաքի Ակ. Իոսիֆյանի Ֆնախկին Կույբիշևս փողոցի թ. 7 տան 27մ<sup>2</sup> բնակելի, 33,1 մ<sup>2</sup> ընդհանուր օգտակար տարածքները և 200 մ<sup>2</sup> հողամասը նվիրել է իր եղբայր Վիտալի Հայրապետյանին:
3. 08.02.1989թ. կնքված նվիրատվության պայմանագրի համաձայն, Ստեփանակերտ քաղաքի Ակ. Իոսիֆյանի Ֆնախկին Կույբիշևս փողոցի թ. 7<sup>բ</sup> տան 1/3-րդ մասը` 25,0 մ<sup>2</sup> բնակելի, 54,1մ<sup>2</sup> ընդհանուր օգտակար տարածքներով և 200մ<sup>2</sup> հողամասը Սլավիկ Հայրապետյանը նվիրել է եղբորը` Վիտալի Հայրապետյանին:
4. Կողմերի միջև այլ ամուսնական պայմանագիր չի կնքվել:
5. Կողմերի ամուսնությունը լուծվել է 2006 թվականին:

**Գերագույն դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումները.**

Քննելով վճռաբեկ բողոքը` նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հետևյալ հիմնավորումներով.

Գործի պարզված տվյալներով, կողմերը օրինական ամուսնության մեջ են գտնվել 1978թ. հունվարի 9-ից: Պատասխանողը Ակ. Իոսիֆյանի անվան փողոցի թ. 7 տան 2/3-րդ մասը նվիրատվությամբ ստացել է եղբոր` Սերժիկ Հայրապետյանից, իսկ առաջին հարկում գտնվող երկու սենյակները մյուս եղբոր` Սլավիկ Հայրապետյանից: Պատասխանողը նվիրատվության պայմանագրերով ստացած գույքի նկատմամբ գրանցել է իր իրավունքները:

Պարզված է, որ 1979-1988թթ. ժամանակահատվածում բնակելի տան մակերեսը ավելացել է 72,57 քառ. մետրով, որի արժեքը, ըստ փորձագետի եզրակացության, կազմել է 19,956 ԱՄՆ դոլար: Բնակելի տան մակերեսների նշանակալի տարբերությունների առկայությունը էլնում է տնատիրության նվիրատվության 1979 և 1989թթ. պայմանագրերից, նույն թվականին կազմված տան տեխնիկական անձնագրերից, ինչպես նաև դատաշինարարական տեխնիկական փորձագիտական եզրակացությունից: Մակերեսային և արժեքային նշանակալի ավելացումները կատարվել են կողմերի համատեղ ամուսնության

ընթացքում: Ստելլա Օհանյանը ծննդաբերել է երեխաներ, դաստիարակել նրանց, աշխատել և ստացած եկամուտները ծախսել է ընտանեկան կարիքների համար, կատարել տնային տնտեսուհու աշխատանքներ:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 2-րդ մասի, մինչև ամուսնությունն ամուսիններից յուրաքանչյուրի գույքը, ինչպես նաև ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի նվեր կամ ժառանգություն ստացած գույքը նրա սեփականությունն է:

Իսկ ըստ նույն հոդվածի 4-րդ մասի, ամուսիններից յուրաքանչյուրի գույքը կարող է ճանաչվել նրանց համատեղ սեփականությունը, եթե պարզվի, որ ամուսնության ընթացքում ամուսինների ընդհանուր գույքի կամ մյուս ամուսնու անձնական գույքի հաշվին կատարվել են ներդրումներ, որոնք նշանակալի չափով ավելացրել են այդ գույքի արժեքը ֆինանսական վերանորոգում, վերակառուցում, վերասարքավորում և այլն, եթե այլ բան նախատեսված չէ ամուսինների միջև կնքված պայմանագրով:

Իրավահարաբերության պահին գործող ամուսնության և ընտանիքի օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերությունները ևս պարունակում են նման բովանդակությամբ դրույթներ:

Այլ ամուսնական պայմանագիր կողմերի միջև չի կնքվել:

Գործում առկա վերը նշված փաստական հանգամանքների առկայության պայմաններում Գերագույն դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը ճիշտ հետևության է հանգել և Ստեփանակերտ քաղաքի Ակ. Իոսիֆյանի անվան փողոցի թ. 7<sup>ա</sup> բնակելի տան՝ պատասխանող Վ. Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող մասերի նկատմամբ ճանաչել նաև Ստելլա Օհանյանի՝ որպես համասեփականատիրոջ իրավունքը:

Ուստի, Գերագույն դատարանը հիմնավոր չի համարում վճռաբեկ բողոքի հիմքերը, վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և առաջին ատյանի դատարանի 2010թ. փետրվարի 26-ի վճռին օրինական ուժ տալու մասին բողոք բերած անձի պահանջը:

Ելնելով վերը շարադրվածներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Պատասխանող Վիտալի Հայրապետյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010 թվականի ապրիլի 22-ի որոշումը թողնել անփոփոխ:
2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Զ.ՕՂԱՆՅԱՆ  
Կ.ՂԱՐԱՅԱՆ**